

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎ

Զբոսաշրջության համաշխարհային մրցունակության զեկույցն առաջին անգամ տպագրվել է 2007թ-ի մարտի 1-ին Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից (ՀՏՖ): Զեկույցի պատրաստման գործին աջակցում են գործընկեր կազմակերպությունները՝ Booz & Company, Deloitte, IATA, IUCN, UNWTO, WTTC, և գործընկեր ինստիտուտների (հետազոտական) համաշխարհային ցանցը: Հայաստանում ՀՏՖ-ի գործընկեր կազմակերպություն է հանդիսանում «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը:

ՀՏՖ-ը երկրների զբոսաշրջության մրցունակությունը գնահատելու նպատակով մշակել է Զբոսաշրջության մրցունակության համաթիվը: Համաթվի հաշվարկման ժամանակ օգտագործվել են զբոսաշրջության ոլորտի ամենահամապարփակ տվյալների հենքերը՝ ինչպես «կոշտ տվյալներ» (WTTC; UNWTO), այնպես էլ հարցումների միջոցով ստացված տվյալներ:

Զբոսաշրջության մրցունակության համաթիվը բազմաչափ վերլուծություն է երկրի՝ որպես զբոսաշրջության կենտրոնի, համեմատական ուժեղ և թույլ կողմերը գնահատելու տեսանկյունից և դրա հենասյուների գնահատականները ձևավորվում են ֆորումի կողմից ընտրված տարբեր աղբյուրներից (ինտերնետային կայքեր, միջազգային կազմակերպությունների կողմից հրատարակվող զեկույցներ), ինչպես նաև գործարար միջավայրում իրականացվող սոցիոլոգիական հարցումներից ստացված տվյալների հիման վրա:

Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրատարակվող Զբոսաշրջության մրցունակության զեկույցում Զբոսաշրջության մրցունակության համաթիվը, որը համակողմանիորեն գնահատում է երկրների մրցունակությունը զբոսաշրջության բնագավառում բաղկացած է 4 ենթահամաթիվերից, որոնք հաշվարկվում են 14 հենասյուների գնահատականների հիման վրա:

Ստորև ներկայացվում է Զբոսաշրջության մրցունակության 4 ենթահամաթիվը՝ իրենց համապատասխան հենասյուներով:

Ենթահամաթիվ 1	
Զբոսաշրջությանն միջավայր	աջակցող
	<ul style="list-style-type: none">• Գործարար միջավայր• Ապահովություն և անվտանգություն• Սանիտարահիգիենիկ պայմաններ և առողջապահություն• Մարդկային ռեսուրսներ և աշխատաշուկա• ՏՀՏ պատրաստվածություն

Ենթահամաթիվ 2	
Զբոսաշրջության քաղաքականություն և աջակցող պայմաններ	<ul style="list-style-type: none"> • Զբոսաշրջությանն առաջնայնություն տալը • Միջազգային հասանելիություն • Գնային մրցունակությունը զբոսաշրջության բնագավառում • Շրջակա միջավայրի կայունություն
Ենթահամաթիվ 3	
Զբոսաշրջության ենթակառուցվածքներ	<ul style="list-style-type: none"> • Օդային տրանսպորտի ենթակառուցվածք • Վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածք • Զբոսաշրջային ենթակառուցվածք
Ենթահամաթիվ 4	
Զբոսաշրջության մշակութային և բնական ռեսուրսներ	Բնական ռեսուրսներ Մշակութային ռեսուրսներ և գործարար ուղևորություն

Հայաստանի Հանրապետությունը արդեն 8-րդ տարին է, ինչ ներգրավվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող «Համաշխարհային զբոսաշրջության և ճամփորդության մրցունակության զեկույցում»:

Հայաստանն ըստ «2019թ. Զբոսաշրջության մրցունակության զեկույցի», զբոսաշրջության մրցունակությամբ 79-րդն է 140 երկրների շարքում՝ դիրքը բարելավելով 5 տեղով (նշենք, որ երկրների թիվը 136-ից դարձել է 140):

Հայաստանն ըստ «2017թ. Զբոսաշրջության մրցունակության զեկույցի», զբոսաշրջության մրցունակությամբ 84-րդն էր 136 երկրների շարքում:

Զբոսաշրջության ոլորտում աշխարհի ամենամրցունակ երկրների ցանկն ինչպես 2019 թվականին, այնպես էլ 2017 թվականին գլխավորում են Իսպանիան, Ֆրանսիան և Գերմանիան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ՝ ԱՊՉ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԾ

Երկիր	Զբաղեցրած դիրքը երկրների շարքում	140	Դիրքի փոփոխությունը 2017-2019 թթ.
-------	----------------------------------	-----	-----------------------------------

ՌԴ	39	+4
Վրաստան	68	+2
Ադրբեջան	71	0
Ղազախստան	80	+1
Հայաստան	79	+5
Տաջիկստան	104	+3
Դրոզդստան	110	+5
Մոլդովա	103	+14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԵՐՆ ԸՍՏ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԻ

Հենասյուններ	2017 թ. Զբաղեցրած դիրքը 140 երկրների շարքում	2019 թ. Զբաղեցրած դիրքը 140 երկրների շարքում	Դիրքի փոփոխությունը 2017-2019 թթ.
1. Բիզնես միջավայրի գնահատմամբ	39	31	+8
2. Ապահովության և անվտանգության գնահատմամբ	34	40	-6
3. Առողջության և հիգիենայի գնահատմամբ	48	44	+4
4. Մարդկային ռեսուրսների և աշխատաշուկայի գնահատմամբ	45	52	-7
5. Տեղեկատվական հաղորդակցության Տեխնոլոգիայի գնահատմամբ	71	68	+3
6. Զբոսաշրջության առաջնահերթության գնահատմամբ	71	74	-3
7. Միջազգային հասանելիության գնահատմամբ	95	74	+21
8. Գնային մրցունակության գնահատմամբ	80	30	+50
9. Միջավայրի կայունության գնահատմամբ	102	101	+1
10. Օդային տրանսպորտի ենթակառուցվածքների ի գնահատմամբ	88	88	0

11. Ցամաքային և ջրային ենթակառուցվածքների գնահատմամբ	88	91	-3
12. Զբոսաշրջային ենթակառուցվածքների գնահատմամբ	74	62	+12
13. Բնական ռեսուրսների գնահատմամբ	89	95	-6
14. Մշակութային ռեսուրսների և գործարար ճամփորդությունների	99	91	+8

Հարկ է նշել, որ հենաայուների որոշ մասի գնահատականները ձևավորվում են ֆորումի կողմից ընտրված տարբեր աղբյուրներից (ինտերնետային կայքեր, միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակվող զեկույցներ), իսկ մյուս մասի գնահատականները՝ հայկական գործարար միջավայրում իրականացվող սոցիոլոգիական հարցումներից ստացված տվյալների հիման վրա:

Իրականացված ուսումնասիրությունները և Համաշխարհային տնտեսական ֆորումի հետ քննարկումները ցույց են տալիս, որ վերջինիս կողմից հրապարակվող «Համաշխարհային զբոսաշրջության և ճամփորդության մրցունակության զեկույցում» Հայաստանին բաժին ընկած ցածր ցուցանիշները որոշ դեպքերում պայմանավորված են նաև զեկույցի մշակման համար հիմք հանդիսացող տեղեկատվական աղբյուրներում սխալ, ոչ լիարժեք կամ հին տվյալների, ինչպես նաև երբեմն գործարար միջավայրում իրականացվող սոցիոլոգիական հարցումներից ստացված ոչ բարենպաստ և զգալի դեպքերում նաև ոչ օբյեկտիվ պատասխաններով:

Նշված խնդիրների լուծման ուղղությամբ, բացի ցուցանիշների բարելավմանն ուղղված ներպետական միջոցառումներից, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ տարբեր ոլորտներում տարվել և տարվում են համապատասխան աշխատանքներ (տվյալների ճշգրտման ու թարմացման, ինչպես նաև իրազեկման), որոնք նույնպես դրական ազդեցություն են ունեցել մրցունակության համաթվում Հայաստանի դիրքի բարելավման վրա: